ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

ԶԵԿՈՒՅՑ

«Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի մասնակիցների մարդու իրավունքների խախտումները»

Վանաձոր

2015

Սույն զեկույցում ներկայացվում է էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի մասնակիցների մարդու իրավունքների խախտումները 2015 թ. հունիսի 23-ին և հուլիսի 6-ին:

Զեկույցում ամփոփվել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող ոստիկանություն - քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությանն ուղղված ԶԼՄ մշտադիտարկման արդյունքները[1], էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ բողոքի ցույցեր կազմակերպած քաղաքացիների նկատմամբ ոստիկանության գործողությունների իրավական գնահատականը և ցուցարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից նախաձեռնած գործողությունները:

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի և ոստիկանության գործողությունների ժամանակագրությունը

2015 թ. մայիսին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (ՀԾԿՀ) հայտ էր ներկայացրել էլեկտրաէներգիայի սակագինը 17 դրամով բարձրացնելու վերաբերյալ: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) հունիսի 17-ին միաձայն որոշում է կայացրել էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնելու մասին: Ըստ որոշման՝ 2015 թ. օգոստոսի 1-ից էլեկտրաէներգիայի ցերեկային սակագինը գործող 41.85 դրամ կՎ/ժ-ից կդառնա 48.78 դրամ, գիշերայինը՝ 31.85 դրամից՝ 38.78 դրամ:

2015 թ. հունիսի 19-ից «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնությունը[2], հաշվի առնելով ժողովրդի պահանջը, նստացույց է սկսել Ազատության հրապարակում՝ պահանջելով անհապաղ կասեցնել էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման մասին ապօրինի որոշումը[3]:

Հունիսի 22-ին ցույցը տեղափոխվել է Բաղրամյան պողոտա: Հավաքի սկզբին կազմակերպիչները մի քանի անգամ հայտարարել են, որ հավաքը կրում է

[1] Տեղեկատվությունը հավաքագրվել է էլեկտրոնային լրատվամիջոցներից և ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջից:

[2] «Ո՛չ Թալանին» քաղաքացիական նախաձեռնությունը ստեղծվել է 2014 թ. հունիսին: Ստեղծման պահից մինչ օրս «Ո՛չ Թալանին» քաղաքացիական նախաձեռնությունն իր անմիջական մասնակցությունն է ունեցել Հայաստանի Հանրապետությունում սոցիալական տարբեր խնդիրների վեր հանմանն ու դրանց լուծման գործընթացներում: http://vochtalanin.am//մեր-մասին/

[3] Ոչ թալանին քաղաքացիական նախաձեռնության հայտարարությունը. Շարժվում ենք դեպի Բաղրամյան 26, 20 հունիսի 2015 թ., Lragir.am, http://www.lragir.am/index/arm/0/country/view/116312

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

բացարձակապես խաղաղ բնույթ և ներկայացրել են իրավական հիմնավորումներ խաղաղ հավաքի անցկացման վերաբերյալ: Երթին մասնակցում էին 4000-5000 մարդ[4]:

Ժամը 22:00-ի սահմաններում ոստիկանները հայտարարել են, որ ՀՀ նախագահը առաջարկել է բանակցել ցուցարարների 4-5 հոգանոց պատվիրակության հետ, սակայն հավաքի մասնակիցները մերժել են առաջարկը: Հավաքը անցնում էր խաղաղ պայմաններում: Ժամը 23:00-ի սահմաններում հավաքի մասնակիցները դադարեցրել են երաժշտությունը և բարձր աղմուկը: Ժամը 24:00-ի սահմաններում Բաղրամյան պողոտա են ժամանել սև հագուստով, դիմակավորված ոստիկաններ: Գիշերը ժամը 01:00-ին անջատվել են Բաղրամյան պողոտայի լույսերը: Նստացույցի մասնակիցների թիվը մինչև առավոտյան ժամը 05:00-ն կազմում էր 500-800 մարդ:

Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը հունիսի 23-ին առավոտյան ժամը 5:20-ին հայտարարել է, որ նստացույցի մասնակիցների գործողություններն ապօրինի են: Հերթական նախազգուշացումից և ցուցարարներին 10 րոպե ժամանակ տրամադրելուց հետո՝ ոստիկանները (այդ թվում քաղաքացիական հագուստով և առանց տարբերանշանի) ցրել են նստացույցը՝ բերման ենթարկելով և նույն օրը ազատ արձակելով 237 քաղաքացու[5]:

Ոստիկանության աշխատակիցների կողմից խաղաղ ցույց իրականացնող ՀՀ քաղաքացիների նկատմամբ կիրառվել է անհամաչափ ուժ՝ կիրառվել է ջրցան մեքենա, բերման ենթարկելը ուղեկցվել է 4-5 հոգանոց խմբերով ցույցի մասնակիցների վրա հարձակվելով, վահանի և մահակի հարվածներով, մարդկանց գետնին ուժգին գցելով, նրանց բազուկով խեղդելով: Ի դեպ ինչպես երևում է տեսանյութերում, քաղաքացիական հագուստով և առանց տարբերանշանի մի քանի անձինք, որոնք մինչ այդ նստացուցարների հետ նստած են, ջրցան մեքենայի գործարկումին զուգահեռ հագնում են «Police» գրառմամբ թևկապերը և հարձակվում ցուցարարների վրա՝ նրանց հեռացնելով նստացույցի տարածքից: Ըստ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տարածված տեղեկատվության հունիսի 23-ին՝ լուսաբացին, շտապօգնության ծառայություն է դիմել 25 անձ, 15 անձ հիվանդանոց է տեղափոխվել տարբեր մարմնական վնասվածքներով[6]:

Ոստիկանության զորքերի հրամանատար, փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանի[7] և այլ բարձրաստիճան ոստիկանների հատուկ հրահանգով բերման է ենթարկվել և դաժան բռնության և ծեծի ենթարկվել լրատվամիջոցների մի շարք ներկայացուցիչներ[8]:

---

[4] 2015 թ. հունիսի 22-ին էլեկտրաէներգիայի թանկացման դեմ տեղի ունեցած հավաք-երթի զեկույց. http://armhels.com/2015/06/23/hunisi-22in-elektraenergiayi-tankacman-dem-teghi0unecats-havak-ert/

[5] Armenian protests: Thousands rally against energy price hike. http://www.bbc.com/news/world-middle-east-33238070

[6] Նոր տվյալներ ակցիայի ժամանակ վնասվածքներ ստացածների մասին. http://replik.am/arm/index.php?id=61784

[7] ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, փոխոստիկանապետ

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Համաձայն լրատվամիջոցներով տարածված տվյալների ոստիկանները բերման են ենթարկել 16 լրագրողի, որոնցից 13-ը ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են բռնության[9]:

Մասնավորապես բերման են ենթարկվել լրագրողներ՝ Անի Հովհաննիսյանը («Հետք»), Հրանտ Գալստյանը («Հետք»), Մկրտիչ Կարապետյանը («Հայկական ժամանակ»), Փայլակ Ֆահրադյանը («Գալա» հ/ը), Կարապետ Սահակյանը («Panarmenian Photo»), Արսեն Սարգսյանը (News.am), Տիգրան Հակոբյանը (Epress.am), Սեդա Մավյանը (անկախ լրագրող), Գարիկ Հարությունյանը (Ազատություն), Դավիթ Դավթյանը («Արմենիա» հ/ը), Խաչատուր Եսայանը («Արմենիա» հ/ը), Արեն Մկրտչյանը (1ին.am), Լևոն Բարսեղյանը («Ասպարեզ»
թերթի և «Asparez.am»-ի գլխավոր խմբագիր), Արսեն Սարգսյանը (News.am), Կորյուն Դավթյանը, Սերժ Սիսերյանը, Վահե Հարությունյանը, Փայլակ Սիգանյանը[10]:

Բռնության են ենթարկվել լրագրողներ՝ Կարեն Չիլինգարյանը (1in.am), Հովսեփ Հովսեփյանը (1in.am), Գոռ Հովհաննիսյանը (1in.am), Նիկոլայ Թորոսյանը (Panarmenian.net), Գևորգ Ղազարյանը (անկախ լրագրող), Արթուր Պապյանը (Ազատություն), Սիսակ Գաբրիելյանը (Ազատություն), Գարիկ Ազիբեկյանը (Ազատություն), Հակոբ Կարապետյանը (ilur.am), Փայլակ Ֆահրադյանը («ԳԱԼԱ» հեռուստաընկերության լրագրող), Տիգրան Հակոբյանը (Epress.am-ի օպերատոր), Կարապետ Սահակյանը (Panarmenian.net-ի ֆոտոլրագրող), Լևոն Բարսեղյանը («Ասպարեզ» թերթի և «Asparez.am»-ի գլխավոր խմբագիր):

Զանգվածային ծեծն ու ձերբակալությունները զուգորդվել են հայհոյանքներով: «Լրագիր» պարբերականի թղթակից Թեհմինե Ենոքյանին հաջողվել է ֆիքսել այդ դեպքերից մեկը տեսախցիկով: Տեսագրության մեջ հստակ երևում է, թե ինչպես է քաղաքացիական հագուստով ոստիկաններից մեկը համազգեստավոր ոստիկանների ուղեկցությամբ հայհոյում լրագրողին, իսկ ոստիկանները, մասնավորապես, մայրաքաղաքի փոխոստիկանապետ Կարեն Մովսիսյանը անտեսում է միջադեպը[11]:

2015 թ. հունիսի 23-ին ՀՀ գլխավոր դատախազության հայտարարության համաձայն 2015 թվականի հունիսի 22-ի լույս 23-ի գիշերը՝ սկսած ժամը 19.30-ից տեսական ժամանակ մի խումբ անձինք, անօրինական հավաք, երթ, ապա նաև նստացույց կազմակերպելով

[8] Տես բռնության ենթարկված լրագրողների պատմությունները. http://media.am/en/Attacks-against-journalists-during-Electric-Yerevan

[9] Պահանջում են պատժել լրագրողների դեմ բռնություն գործածներին. Հայտարարություն. http://news.am/arm/news/273399.html

[10] 7 կազմակերպություններ հայտարարություն են տարածել լրագրողների նկատմամբ բռնության վերաբերյալ. http://armtimes.com/hy/read/65889

[11] Ոստիկանները և «կլիր կա վրետ» հայհոյանքը. http://www.epress.am/2015/06/23/ոստիկանները-և-«կլիր-կա-վրետ»-հայհոյան.html

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում խախտել են հասարակական կարգը: Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով՝ խուլիգանության հանցակազմի հատկանիշներով: 2015 թ. հունիսի 22-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ նախաքննություն կատարելու համար: Ոստիկանության կողմից բերման ենթարկված անձանցից ՀՀ քննչական կոմիտեի քննիչների կողմից հարցաքննվել է շուրջ 40 անձ: Նշանակվել են դատաբժշկական, նյութագիտական և քրեագիտական փորձաքննություններ: Նույն հայտարարության մեջ նշվում է, որ 2015 թ. հունիսի 22-ի լույս 23-ի գիշերը Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած դեպքերի մասնակիցների ստացած մարմնական վնասվածքների հանգամանքները պարզելու նպատակով, զանգվածային լրատվամիջոցների էլեկտրոնային կայքէջերից զննվել և հարուցված քրեական գործի նյութերին են կցվել մի շարք հրապարակումներ և դեպքերի վերաբերյալ տեսաձայնագրություններ:

2015 թ. հուլիսի 2-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ բռնություններ գործադրելու, պաշտոնական լիազորություններն անցնելու և լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչնդոտելու դեպքերի առթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով՝ հիմք ընդունելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2015 թ. հունիսի 23-ին ներկայացված հանցագործության մասին հաղորդումը և լրատվական միջոցներով հրապարակված ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացրած բռնություններն ու ապօրինությունները ֆիքսած նյութերն ու տեսաձայնագրությունները:

Հարուցված քրեական գործի շրջանակներում, համաձայն լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության, ավելի քան 10 լրագրողներ գործում ներգրավվել են որպես տուժող:

Ըստ լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության որոշ լրագրողների ոստիկանությունն արդեն փոխհատուցել է Բաղրամյան պողոտայում վնասված սարքերը: Լրագրող Հակոբ Կարապետյանը հայտարարել է, որ իրեն ոստիկանությունում առաջարկել են փոխհատուցում, բայց պայմանով, եթե ինքը գրավոր հաստատի, որ ուրիշ բողոք, պահանջ չունի ոստիկանությունից: Լրագրողը մերժել է ոստիկանության առաջարկը[12]:

Բաղրամյան պողոտայում նստացույցը ցրելու ընթացքում բռնի ուժի գործադրմամբ ոստիկանության բաժիններ տարված 237 խաղաղ ցուցարարներից[13] մոտ կեսը՝ 106 հոգի,

[12] 1) «Ոստիկանական ապօրինություններից տուժած լրագրողների գործը միտումնավոր ձգձգվում է. արդեն հավասարվում ենք Ադրբեջանին». http://galatv.am/hy/news/122024/, 2) Հունիսի 23-ի գործով լրագրողները համարվում են տուժող.http://armtimes.com/hy/read/68309, 3) Բաղրամյան պողոտայում բռնության ենթարկված լրագրողը տուժող է ճանաչվել. http://www.aravot.am/2015/08/14/600130/

[13] Electricity Protest: Unprecedented Number of Citizens Detained. http://civilnet.am/2015/06/23/electricity-protest-unprecedented-number-of-citizens-detained/#.VYftD_ntmkp

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

իրենց կամքին հակառակ տեղափոխվել են Երևանի Նարկոլոգիական կենտրոն և ենթարկվել արյան մեջ ալկոհոլի և թմրամիջոցների հայտնաբերման փորձաքննության:

Կենտրոնի տնօրեն Պետրոս Սեմիրջյանը «Ազատություն» ռադիոկայանին հայտնել է, որ ալկոհոլի բացահայտման փորձաքննություն անցած ցուցարարների մոտ ալկոհոլի պարունակություն չի հայտնաբերվել[14]: Արյան մեջ թմրամիջոցի հայտնաբերմանն ուղղված փորձաքննության արդյունքները չեն հրապարակվել:

Երևանի բնակիչ, ՌԴ քաղաքացի Ելենա Օվսյաննիկովան լրատվամիջոցներին տված հարցազրույցներում հայտնել է, որ հունիսի 23-ի երեկոյան, երբ ցույցի մասնակիցները ոստիկանության բռնի գործողություններից հետո կրկին փակել էին Բաղրամյան պողոտան, ինքը փորձել է ցուցարարների դիմաց պատնեշ կազմած ոստիկաններին բռնությունից զերծ մնալու կոչեր անել: Նրան մոտեցել է ՀՀ փոստիկանապետ Հունան Պողոսյանը և պահանջել հեռանալ տարածքից՝ պատճառաբանելով, թե նա իր ներկայությամբ «գրգռում է ոստիկաններին, քանի որ նրանք սեռական քաղցի մեջ են, իսկ նա քայլում է նրանց առջև և խանգարում է աշխատել: Մի քանի րոպե անց մի քանի տղամարդ մոտեցել են Ե. Օվսյաննիկովային, որոնցից մեկը կոպտորեն բռնել է նրա ձեռքը և սկսել քաշքշել: Ե. Օվսյաննիկովան, չդիմանալով ճնշմանը, հեռացել է ոստիկանության շղթայի և «բարիկադների» միջև ընկած տարածքից: Կատարվածից հետո Ե. Օվսյաննիկովայի վերաբերյալ տարբեր նյութեր են հրապարակվել ԶԼՄ տարբեր կայքերում, ինչպես նաև սոցիալական ցանցերում: ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Նարեկ Մալյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է մի տեսանյութ, որտեղ տեսագրված է Ե. Օվսյաննիկովայի և պատգամավոր Թ. Պողոսյանի խոսակցությունը՝ հրապարակման մեջ՝ նշելով թեՕվսյաննիկովան ուկրաինական սադրիչ է: Բացի այդ, Ն. Մալյանը պնդել է, որ Ե. Օվսյաննիկովան սեռական հարաբերություն ունենալու առաջարկ է արել Բաղրամյան պողոտայում գտնվող և ծառայություն իրականացնող բոլոր ոստիկաններին:

Հարկ է նշել, որ ոստիկանության աշխատակիցների կողմից հետապնդումները ցույցի մասնակիցների նկատմամբ չեն սահմանափակվել Բաղրամյան պողոտայով, կամ Ազատության հրապարակով: Քաղաքացիական հագուստով անձինք՝ երբեմն չներկայանալով, իսկ հիմնականում ներկայանալով որպես համայնքի «նոր օպեր-լիազորներ» այցելել են բազմաթիվ ցուցարարների բնակության վայրեր և տարբեր պատճառաբանություններով զրուցել են նրանց հարազատների կամ հարևանների հետ, հարցուփորձ արել ցույցի մասնակիցների, կամ նրանց հարազատների վերաբերյալ:

[14] Փորձաքննություն անցած ցուցարարների մոտ ալկոհոլի պարունակություն չի հայտնաբերվել. http://www.azatutyun.am/archive/news/20150624/2031/2031.html?id=27090602

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Գրանցվել է դեպք, երբ քաղաքացիական հագուստով անձինք այցելել են ցույցի մասնակից քաղաքացու տուն և առանց ներկայանալու պահանջել են բնակարանում ապրողների անձնագրերը և տան անդամների բջջային հեռախոսների համարները[15]:

Ոստիկանները նույնիսկ փորձել են Բաղրամյան պողոտայի հարակից շենքերի բնակիչներից պարտադրաբար դիմում-բողոքներ հավաքել ընդդեմ ցույցի, իբր ցուցարարները խախտում են իրենց անդորրը, սակայն չի ստացվել:

Հունիսի 23-ի առավոտյան ոստիկանության կողմից Բաղրամյան պողոտայում իրականացվող նստացույցը ուժով ցրելուց հետո նույն օրը երեկոյան «Ոչ թալանին» նախաձեռնության կողմից հայտարարվել է հավաք Բաղրամյան պողոտայում: Ոստիկանությունից պաշտպանվելու նպատակով ցուցարարներն աղբամաններով բարիկադ են կանգնեցրել: Քաղաքացիների հոսքը Բաղրամյան պողոտա բազմապատկվել է: Հունիսի 24-ից քաղաքացիները Բաղրամյան պողոտայում նստացույց են սկսել:

Հունիսի 23-ից մինչև հունիսի 29-ը մի շարք հասարակական և քաղաքական գործիչներ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի նախաձեռնությամբ կենդանի պատ են կազմել ցուցարարների և ոստիկանների միջև՝ բռնի ուժի կիրառումը կանխելու նպատակով: Հունիսի 25-ին վարչապետ Հովիկ Աբրահամյանը կառավարության նիստի ժամանակ հայտնել է, որ խորհրդակցության արդյունքում որոշվել է որպես հոսանքի թանկացման փոխհատուցում՝ 105 հազար ընտանիքների, ինչը կազմում է մոտ 400 հազար մարդ, տարեկան վճարել 24 հազարական դրամ որպես սոցիալական նպաստի հավելում՝ ավելացված սակագնի փոխհատուցման նպատակով: Հովիկ Աբրահամյանը միաժամանակ հայտարարել է, որ հիմնավորված է համարում Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումը էլեկտրաէներգիայի մեկ կիլովատ/ժամը 6.93 դրամով թանկացնելու վերաբերյալ:

Վարչապետի հայտարարությունը զայրացրել է ցույցի մասնակից քաղաքացիներին, նրանք շարունակել են բողոքի ակցիան պահանջելով՝

1. վերանայել և չեղյալ հայտարարել ՀԾԿՀ-ի կողմից ապօրինի կայացրած հոսանքի սակագնի որոշումը,
2. վերանայել անցած տարվա սակագինը՝ նվազեցման նպատակով,
3. պատժել բոլոր այն կարգազանց ոստիկաններին, ովքեր անօրինական կերպով հունիսի 23-ի առավոտյան, Բաղրամյան պողոտայում ծեծի ենթարկեցին խաղաղ ցուցարարներին: Ինչպես նաև պատժել նրանց անօրինական հրաման տվողներին:

[15] «Նոր օպերներն» այցելում են Բաղրամյանի նստացույցի մասնակիցներին. http://www.epress.am/2015/07/10/«նոր-օպերներն»-այցելում-են-բաղրամյան.html

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Հունիսի 26-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստի շրջանակներում որոշում է կայացվել հանձնաժողովի հովանու ներքո իրականացնել ՀԷՑ-ի աուդիտ:

Հունիսի 27-ի երեկոյան Սերժ Սարգսյանը խորհրդակցություն է հրավիրել տնտեսական քաղաքականության պատասխանատուների հետ և հայտարարել, որ մինչև ՀԷՑ-ում աուդիտի եզրակացության կազմումը կառավարությունն իր վրա կվերցնի սակագնի բարձրացման ամբողջ բեռը՝ նշելով, որ ընթացող ծրագրերին կամ սոցիալական ծախսերին չեն դիպչի և փոխհատուցման գումարները կգտնեն անվտանգության համար նախատեսվող միջոցներից:

Այս որոշումը նույնպես չի բավարարել ցուցարարներին: «Ոչ թալանին» նախաձեռնության անդամները հայտարարել են, որ իրենց պահանջը, այն է՝ էլ.էներգիայի սակագնի թանկացման որոշման չեղարկումը, չի փոխվել: Նրանք հայտարարել են, որ իրենք մնալու են Բաղրամյան փողոցում մինչև իրենց պահանջի կատարումը: Բացի այդ, նրանք պահանջել են, որպեսզի պատժվեն հունիսի 23-ին անհամաչափ ուժ կիրառած քաղաքացիական հագուստով ոստիկանները:

Հունիսի 28-ին Բաղրամյան պողոտայում դրությունը սրվել է. ոստիկանությունը մի քանի անգամ հայտարարել է, որ ժամը 23:00-ից հետո «փորձելու է վերականգնել հասարակական կարգը», իսկ իրավախախտները ենթարկվելու են պատասխանատվության: «Ոչ թալանին» նախաձեռնության անդամները հանդես են եկել հայտարարությամբ՝ Բաղրամյան պողոտայում հավաքված ցուցարարներին կոչ անելով երթով շարժվել Ազատության հրապարակ և այնտեղ «կայացնել խելամիտ որոշումներ»: Ցուցարարների մի փոքր մասը հետևել են կոչին, իսկ մեծ մասը բողոքը շարունակել է Բաղրամյան պողոտայում: Ոստիկանությունը հայտարարել է, որ միջոցներ ձեռք կառնի՝ ցրելու Բաղրամյան պողոտայում մնացողներին, սակայն որևէ գործողության չի դիմել:

Հունիսի 29-ին հայտնի է դարձել, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին կետով՝ «գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը», որի շրջանակներում հունիսի 28-ին քննիչի կողմից որոշում է կայացվել առգրավել «Սանիտեկ» ընկերությանը պատկանող և տվյալ պահին Բաղրամյան պողոտայում որպես բարիկադ օգտագործվող 41 աղբամանները:

Հունիսի 30-ին երեկոյան ձևավորվել է քաղաքացիների համակարգող խումբ: Ոստիկանությունը շարունակում էր ցուցարաներին հորդորել ցույցը տեղափոխել այլ վայր՝ նշելով, որ հակառակ դեպքում ոստիկանությունը «ստիպված կլինի ամբողջ ծավալով գործադրել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները», սակայն Բաղրամյանի ցուցարարները մնացել են անդրդվելի: Հունիսի 30-ին «Ոչ

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

թալանին»-ը վերադարձավ Բաղրամյան պողոտա, սակայն ոչ որպես շարժումը համակարգող խումբ:

Հուլիսի 4-ին էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ պայքարի շարժման հանրային կապերի պատասխանատու Դավիթ Սանասարյանը հավաքի ժամանակ հայտարարել է, որ մինչև երկուշաբթի՝ հուլիսի 6-ը՝ ժամը 21:00-ը, ժամանակ են տալիս իշխանություններին՝ կատարելու իրենց պահանջները: Եթե իշխանությունները չկատարեն պահանջները, շարժումը սկսելու է «մեկ քայլ առաջ» ակցիան՝ ամեն օր աղբամանների բարիկադը տանելով մեկ մետր առաջ՝ դեպի նախագահական նստավայր:

Հուլիսի 6-ին Ոստիկանությունը հայտարարել է, որ մինչև ժամը 12:30 Բաղրամյան պողոտան չազատելու դեպքում ոստիկանությունը կվերականգնի խախտված երթևեկությունը և կապամոնտաժի աղբամանները, ինչը և կատարվել է: Ոստիկանության գործողությունների արդյունքում բերման է ենթարկվել 46 անձ, որոնցից 6-ը անչափահաս: Մոտ երկու ժամ անց բոլոր բերման ենթարկված անձինք ազատ են արձակվել Կենտրոնի և Արաբկիրի ոստիկանության բաժանմունքներից: Նրանցից միայն Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ վարչական վարույթ է հարուցվել՝ ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու հիմքով:

Համաձայն Ոստիկանության կողմից տարածված հայտարարության հուլիսի 6-ին իրականացված գործողությունների ընթացքում ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ հատուկ միջոցներ չեն գործադրվել:

Հարկ է նշել, որ բերման ենթարկված քաղաքացիները պնդում են, որ իրենց նկատմամբ բռնություններ են կիրառվել ոստիկանների կողմից: Մասնավորապես՝ Միքայել Կիրակոսյանը հենց դեպքի օրը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն: Նրա խոսքով, բերման ենթարկելու ընթացքում իր նկատմամբ բռնություն է գործադրվել: Արդեն գտնվելով ոստիկանության Արաբկիրի բաժնում, նա պահանջել է, որ իրեն բժշկական օգնություն տրամադրեն: Ժամանած Շտապօգնության մեքենայով քաղաքացուն տեղափոխել են թիվ 8 հիվանդանոց, որտեղ արձանագրվել են նրա վնասվածքները: Դուրս գրվելով հիվանդանոցից՝ քաղաքացին ՀՔԾ-ում հաղորդում է ներկայացրել ոստիկանների կողմից իր նկատմամբ կատարված հանցագործության մասին:

Քաղաքագետ Ստյոպա Սաֆարյանը Բաղրամյան պողոտայից ոստիկանական բաժանմունքներ բերման ենթարկված ակտիվիստների հետ զրույցից հետո լրագրողներին հայտնել է, որ ոստիկանների կողմից բռնություններ կիրառելու վերաբերյալ տարբեր ահազանգեր կան: Նրա խոսքով, թե Կենտրոն, թե Արաբկիր բաժանմունքից ահազանգողները պնդել են, որ բռնությունը հենց ոստիկանական մեքենայում է կիրառվել:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

«Ոչ թալանին» նախաձեռնության համակարգող խմբի անդամ Մաքսիմ Սարգսյանը ականատես է եղել, թե ինչպես են Արաբկիրի բաժնից 4-5 անչափահաս դուրս եկել՝ թևերի և մարմնի վրա քերծվածքներով: Վաղինակ Շուշանյանը հայտարարել է, որ ոստիկանական մեքենայի մեջ հարվածել են՝ Նարեկ Այվազյանին և անչափահաս Սպարտակին:

2015 թ. հուլիսի 16-ի ստացվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հուլիսի 7-ի հանցագործության մասին հաղորդման պատասխանը: Ըստ դրա՝ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված հաղորդումների և նյութերի, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի և Միքայել Կիրակոսյանի հաղորդումների հիման վրա բռնություն գործադրելով զուգորդված՝ պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքերի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հուլիսի 6-ին Շարժման համակարգողները երեկոյան հանրահավաք են անցկացրել Ազատության հրապարակում, որի ավարտին որոշել են գիշերել այդտեղ և ծրագրել հետագա քայլերը:

Հուլիսի 7-ին «Ո՛չ թալանին» քաղաքացիական նախաձեռնությունը հայտարարել է, որ հուլիսի 14-ին Երևանի կենտրոնական փողոցներով շարժվելու է դեպի Գլխավոր դատախազություն՝ պահանջելու պատժել այն ոստիկաններին, ովքեր հունիսի 23-ին և դրան հաջորդող դեպքերի ժամանակ բռնի ուժ են կիրառել էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ պայքարող քաղաքացիների նկատմամբ:

Հուլիսի 13-ին ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել այն մասին, որ հունիսի 23-ին Երևանի Բաղրամյան պողոտայում և Ազատության հրապարակում տեղի ունեցած դեպքերով նույն օրը ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում նշանակվել է ծառայողական քննություն:

Հուլիսի 13-ի դրությամբ կատարված քննության արդյունքներով պարզվել է, որ ոստիկանության մի խումբ ծառայողներ թույլ են տվել կարգապահական խախտումներ: Վլադիմիր Գասպարյանի հրամանով՝ ոստիկանության 1 ծառայողի պաշտոնն իջեցվել է մեկ աստիճանով, 1 ծառայողի հայտարարվել է «նկատողություն», 7 ծառայողի՝ «խիստ նկատողություն»:

Մասնավորապես, ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Աբրահամյանի պաշտոնն իջեցվել է մեկ աստիճանով, Ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Մեհրաբյանին և քրեական հետախուզության բաժնի կրտսեր օպերլիազոր Ա. Ղալեչյանին հայտարարվել է «խիստ նկատողություն», Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի դասակի

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

հրամանատարի օգնական, ոստիկանության ավագ ենթասպա Ս. Բաբայանին, նույն դասակի ոստիկան, ոստիկանության ավագ Ա. Մկրտչյանին, նույն գնդի ծառայության ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Կ. Բուդաղյանին, գումարտակի հրամանատար, ոստիկանության կապիտան Գ. Խաչատարյանին, նույն վարչության ՔՀԲ կրտսեր օպերլիազոր, ոստիկանության ավագ ենթասպա Ա. Մանուչարյանին և Կենտրոնականի բաժնի օպերլիազոր, ոստիկանության կապիտան Ռ. Վարդանյանին հայտարարվել է «խիստ նկատողություն»:

2015 թ. հուլիսի 23-ին ոստիկանության կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով ոստիկանության ևս 3 աշխատակից ենթարկվել են կարգապահական տույժերի:

Մասնավորապես, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՔՀ ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Է. Պողոսյանին և նույն վարչության ՊՊԾ գնդի ավագ ոստիկան, ոստիկանության ավագ Հ. Սանթրոսյանին և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ԱԳ բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Կ. Բաբայանին հայտարարվել է «խիստ նկատողություն»՝ համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 43-րդ հոդվածի 6-րդ մասի, «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի: Ծառայողական քննության նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Ցուցարարների և լրագրողների նկատմամբ բռնություններ կիրառած ոստիկանների ինքնությունը պարզելու համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակը լրատվամիջոցներից հավաքել է ցույցին ներկա գտնված և ցուցարարների և լրագրողների նկատմամբ բռնություն կիրառած ոստիկանների լուսանկարները: Կազմակերպությունը միջնորդություն է ներկայացրել ՀՀ ՀՔԾ լուսանկարներում պատկերված ոստիկաններին քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ, սակայն մինչ օրս որևէ ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել: Հատկանշական է, որ կարգապահական տույժի չեն ենթարկվել այն բարձրաստիճան ոստիկանները ում անմիջական հրամանով տեղի են ունեցել բռնությունները:

Հուլիսի 14-ին՝ 18:00-ին, Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի մոտ մեկնարկել է «Ոչ թալանին» նախաձեռնության հավաքը: Շուրջ 30 րոպե կինոթատրոնի մոտ կանգնելուց հետո հավաքի մասնակիցները սկսել են երթ դեպի գլխավոր դատախազություն: Երթի մասնակիցները պահանջել են պատժել այն ոստիկաններին, ովքեր հունիսի 23-ին և դրան հաջորդող դեպքերի ժամանակ բռնի ուժ են կիրառել էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ պայքարող քաղաքացիների նկատմամբ: Երթի մասնակիցները նստացույց են իրականացրել՝ Մաշտոց-Ամիրյան փողոցների խաչմերուկում՝ խաչմերուկը

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

փակելով մոտ 20 րոպե և Հանրապետության հրապարակում՝ պահանջելով ՀՀ գլխավոր դատախազությունից՝ երաշխիքներ տալ, որ պատժվելու են հունիսի 23-ի վաղ առավոտյան ցուցարարների և լրագրողների նկատմամբ բռնություններ կիրառված ոստիկաններն ու քաղաքացիական հագուստով անձինք: ՀՀ գլխավոր դատախազություն իրենց պահանջը գրավոր փոխանցելուց հետո ցուցարարները հեռացել են՝ 10 օր ժամանակ տալով ՀՀ գլխավոր դատախազությանը պատասխանի համար:

Նույն օրը «Ոչ թալանին» նախաձեռնությունը Ոստիկանությունում իրականացված քննության վերաբերյալ հայտարարություն է տարածել, որով արտահայտել է իր դժգոհությունը Վլադիմիր Գասպարյանի հրահանգով 9 ոստիկանների կարգապահական տույժերի ենթարկելու վերաբերյալ:, Հայտարարությունում ներկայացվել են հետևյալ պահանջները՝

- պատժել անօրինական գործողություններ կատարած ոստիկաններին և քաղաքացիական հագուստով այն մարդկանց, ովքեր ներկայանում էին որպես ոստիկան՝ ցուցաբերելով լկտի պահվածք և կատարելով անօրինական գործողություններ, ինչպես նաև պատժի ենթարկել հունիսի 23-ին և հուլիսի 6-ին դեպքի վայրում գտնվող ոստիկանության բարձրաստիճան հրամանատարական կազմին,

- հեռացնել նրանց համակարգից, այնուհետև գործ հարուցել նրանց դեմ այդ քայլով հաստատել, որ նրանք անօրինական քայլեր կատարելու համար հրաման չեն ստացել ոստիկանապետի կողմից:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ցույցերը հանրապետության այլ քաղաքներում

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ցույցեր են տեղի ունեցել նաև հանրապետության այլ քաղաքներում՝ Գյումրիում, Վանաձորում, Սպիտակում, Ալավերդիում, Աշտարակում, Աբովյանում, Կապանում, Սիսիանում, իսկ Արագածոտնի մարզի գյուղերի բնակիչները հունիսի 28-ին փակեցին Երևան-Ապարան ճանապարհը՝ պահանջելով չթանկացնել էլեկտրաէներգիան:

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ցույցերը Գյումրիում

Համաձայն լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության ոստիկանության աշխատակիցների կողմից խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ բռնություններ են գրանցվել վերոնշյալ քաղաքներից միայն Գյումրիում:

Հունիսի 23-ի լուսաբացին Գյումրու Թատերական հրապարակում էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ անցկացվող խաղաղ նստացույցից բերման են ենթարկվել 13 գյումրեցիներ, որոնցից մեկի՝ Տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դասախոս, «Կոմպասս» ՀԿ խորհրդի անդամ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կարեն Պետրոսյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ: Կարեն Պետրոսյանը նախ ներգրավվել է որպես կասկածյալ, այնուհետև հունիսի 30-ին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խուլիգանություն, որը պատժվում է ուղղիչ աշխատանքներով առավելագույնը մեկ տարի ժամանակով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամանակով:

Բոլոր բերման ենթարկվածների մոտ բերման ենթարկվելուց հետո հայտնաբերվել են կապտուկներ: Բացի ցուցարարներին բերման ենթարկելը ոստիկանությունն առգրավել է բերման ենթարկվածների ավտոմեքենաները նստացույցի վայրից բավական հեռու գտնվող կայանատեղիից՝ առանց դրանց տերերին իրազեկելու[16]:

Գյումրեցի ակտիվիստները հունիսի 23-ից հետո շարունակել են բողոքի ցույցերը՝ պահանջելով անհապաղ կարճել հոսանքի թանկացման դեմ պայքարող տնտեսագետ-դասախոս Կարեն Պետրոսյանի նկատմամբ խուլիգանության հատկանիշներով հարուցված քրեական գործը: Ակտիվիստները հայտարարել են, որ պահանջը չբավարարելու դեպքում գյումրեցիները կսկսեն անհնազանդության ակցիաներ: Նրանք

[16] Գյումրիում բերման ենթարկված ակտիվիստների վրա կապտուկներ են հայտնաբերվել փաստաբան. http://www.epress.am/2015/07/10/գյումրիում-բերման-ենթարկված-ակտիվիս.html

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

պահանջել են նաև Շիրակի մարզի նորանշանակ ոստիկանապետ Գրիշա Ամիրխանյանի հրաժարականը:

2015 թ. հուլիսի 31-ին որոշում է կայացվել Կարեն Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ[17]:

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ցույցերը Վանաձորում

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման վերաբերյալ ՀԾԿՀ որոշումը չեղյալ հայտարարելու, ՀԷՑ-ի անկախ աուդիտ իրականացնելու և հունիսի 23-ի առավոտյան քաղաքացիների նկատմամբ բռնություն կիրառած ոստիկաններին ու նրանց այդպիսի հրաման տվողներին պատժելու, ինպես նաև ցուցարարների ու լրագրողների նկատմամբ վարչական և քրեական հետապնդումները դադարեցնելու պահանջով ցույցը Վանաձորում սկսվել է հունիսի 23-ին՝ «Արցախ» պուրակում, ապա ցուցարաները երթով շարժվել են դեպի «Հայքի» հրապարակ, նրանց մի մասը գիշերը նստացույց է անցկացրել այնտեղ, որի ժամանակ ցուցարարները փորձել են վրան տեղադրել, սակայն ոստիկանությունը չի թույլատրել: Հաջորդ օրը ցույցը շարունակվել է «Հայքի» հրապարակում, ցուցարարներին միացել և ավտոերթով բողոքի ակցիա են իրականացրել նաև մի խումբ տաքսու վարորդներ: Հունիսի 26-ին Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը ցուցարարների հետ զրույցում նրանց հորդորել է «տարբերվել» մյուսներից և դադարեցնել ցույցը, նաև խոստացել է հրավիրել ավագանու արտահերթ նիստ աուդիտի պահանջ ներկայացնելու հարցը քննարկելու համար: Ցուցարարները, սակայն, շարունակել են բողոքի ակցիան: Ավագանու արտահերթ նիստ չի կայացել:

Վանաձորում ցույցերից բացի իրականացվել են նաև բողոքի այլ ակցիաներ. հուլիսի 2-ի առավոտյան Հայքի հրապարակում հայտնվել են «ջրցանվող» երիտասարդին պատկերող գրաֆիտիներ, որոնք պատկերել են էլեկտրաէներգիայի սակագնի աճի դինամիկան ըստ տարիների: Նկարներն անմիջապես մաքրվել են քաղաքապետարանի կողմից: Հուլիսի 7-ի առավոտյան «ջրցանվող» երիտասարդի նկարները հայտնվել են քաղաքի այլ փողոցների մայթերին:

Հուլիսի 15-ին Վանաձոր քաղաքում սյուների և ծառերի վրա հայտնվել են հունիսի 23-ին Բաղրամյան պողոտայում ցուցարարների նկատմամբ բռնություն կիրառած քաղաքացիական հագուստով ոստիկանների լուսանկարները և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումը պատկերող թռուցիկներ:

[17] Կարճվեց Գյումրու փոխոստիկանապետի կեղծ ցուցմունքով հարուցված քրեական գործը. http://www.aravot.am/2015/07/31/597778/

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Հուլիսի 14-ին «Մենք ենք տերը մեր երկրի» վանկարկումներով վանաձորցի ակտիվիստները «Հայքի» հրապարակից երթով շարժվել են դեպի Լոռու մարզի դատախազություն՝ պահանջելու պատասխանատվության ենթարկել հունիսի 23-ին բռնություն կիրառած ոստիկաններին, ինչպես նաև դադարեցնել խաղաղ ցուցարարների քրեական ու վարչական հետապնդումը: Ակտիվիստները երթի ընթացքում թռուցիկներ են բաժանել և կոչ արել մյուսներին միանալ իրենց:

Ակտիվիստները իրենց պահանջները հայտարարության տեսքով հանձնել են ՀՀ Լոռու մարզի դատախազության տարածքային բաժնի պետ Ս. Չիլինգարյանին:

Լոռու մարզի դատախազության առջև իրենց պահանջները բարձրաձայնելուց հետո հայտարարել են, որ շարունակելու են պայքարը այնքան ժամանակ, մինչև արդյունքի հասնեն: Ցուցարարներից մեկի գրավոր հարցմանն ի պատասխան՝ Լոռու մարզի դատախազությունից հայտնել են, որ ցուցարարների հայտարարությունը կցվել է հարուցված քրեական գործին,որը դեռ քննության փուլում է:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված գործողությունները

Կազմակերպությունը իրավական աջակցություն է ցուցաբերել ցույցի մասնակիցներին՝ տրամադրելով իրավաբանական խորհրդատվություն և ներգրավելով փաստաբաններ բերման ենթարկված քաղաքացիների շահերը պաշտպանելու նպատակով: Կազմակերպության կողմից դիմումներ, հարցումներ և հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացվել համապատասխան պաշտոնատար անձանց:

Հունիսի 23-ից ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչները դիտարկել են Վանաձոր քաղաքում կազմակերպված բոլոր ցույցերը, ստեղծվել է արագ արձագանքման խումբ՝ քաղաքացիների իրավունքների ոտնահարման դեպքում նրանց իրավական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել հետևյալ գործողությունները.

- Հիմք ընդունելով քաղաքացիներից ստացված ահազանգերը՝ 2015 թ. հունիսի 23-ին կազմակերպության կողմից տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացվել ՀՀ ոստիկանություն 88 անձանց վերաբերյալ[18]՝ պարզելու արդյոք նշված անձինք բերման են ենթարկվել, թե՝ ոչ, եթե այո, ապա կոնկրետ որ ժամին և ինչ հիմքով են բերման ենթարկվել և նրանցից յուրաքանչյուրը ոստիկանության որ բաժնում է պահվում և ինչ կարգավիճակով:

2015 թ. հուլիսի 7-ին ստացվել է Ոստիկանության շտաբի պետի պատասխան գրությունը, որով տրամադրվել է տեղեկատվություն բերման ենթարկվածներից յուրաքանչյուրի գտնվելու վայրի վերաբերյալ՝ ըստ ծննդյան թվականների և բնակության հասցեների, միևնույն ժամանակ ոստիկանությունը նշել է, որ տվյալ քաղաքացիները բերման են ենթարկվել խուլիգանություն կատարելու կասկածանքով:

- Հունիսի 23-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն և հատուկ քննչական ծառայություն ոստիկանության զորքերի հրամանատար փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանի հրահանգով նույն օրը 5:30-ին Բաղրամյան պողոտայում նստացույցը ցրելիս ցույցի

[18] հարցումն անելիս հայտնի է եղել, որ 88-ից 60-ը բերման են ենթարկվել, իսկ 28 անձանց վերաբերյալ հարազատները ընդհանրապես տեղեկություն չեն ունեցել:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

մասնակիցների, ինչպես նաև լրագրողների նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից գործադրված բռնությունների վերաբերյալ:

Հիմք ընդունելով Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը և լրատվական միջոցներով հրապարակված ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացրած բռնություններն ու ապօրինությունները ֆիքսած նյութերն ու տեսաձայնագրությունները՝ 2015 թ. հուլիսի 2-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ բռնություններ գործադրելու, պաշտոնական լիազորություններն անցնելու և լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչնդոտելու դեպքերի առթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թ. հուլիսի 2-ին հարուցված քրեական գործի շրջանակներում որպես հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձ կազմակերպության կողմից միջնորդություններ են ներկայացվել ՀՀ ՀՔԾ՝ տվյալ օրերին ծառայություն իրականացրած ոստիկանության աշխատակիցների օրգանիզմում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հնարավոր առկայության բացահայտմանն ուղղված փորձաքննություն նշանակելու համար:

Ոստիկանության աշխատակիցների օրգանիզմում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հնարավոր առկայության վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու մասին միջնորդությունը վարույթն իրականացնող մարմինը մերժել է այն հիմնավորմամբ, որ ոստիկանության աշխատակիցների կողմից թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հնարավոր օգտագործման մասին ենթադրություններ անելու համար քրեական գործով տվյալներ ձեռք չեն բերվել, հետևաբար նման փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտություն չկա: Միևնույն ժամանակ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ խաղաղ ցույց իրականացնող թվով 106 ցուցարար ոստիկանության ուղեգրով՝ անօրինական կարգով, ուղարկվել է հանրապետական նարկոլոգիական կլինիկա, թե ինչ հիմքով հայտնի չէ:

Ներկայացված միջնորդությունը մերժելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը բողոքարկվել է վերադաս դատախազին:

Սույն բողոքի վերաբերյալ վերադաս դատախազի կողմից կայացվել է որոշում՝ բողոքը մերժելու մասին, որը հիմնավորվել է նույն կերպ, ինչպես ՀՀ ՀՔԾ վարույթն իրականացնող քննիչն էր հիմնավորել:

Կազմակերպությունը նաև միջնորդել է թիվ 62217915 քրեական գործի շրջանակներում որպես մեղադրյալներ ներգրավել ոստիկանության ներքին զորքերի հրամանատար Լևոն Երանոսյանին, Հունան Պողոսյանին, ՀՀ ոստիկանության Նոր-Նորքի և Մալաթիայի բաժինների պետերին, Ռաֆայել Պողոսյանին, Արթուր Պողոսյանին, Արթուր Ղալեչյանին,

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Խաչիկ Ավետիսյանին, Արթուր Մեհրաբյանին[19], ինչպես նաև հայտնաբերել և որպես մեղադրյալ ներգրավել լուսանկարներում պատկերված այն անձանց[20], ում անունները հայտնի չեն կազմակերպությանը:

Այս միջնորդության վերաբերյալ, վարույթն իրականացնող մարմինը կայացրել է միջնորդության լուծումը հետաձգելու մասին որոշում, և նշել, որ այդ հարցին կանդրադառնան այն ժամանակ, երբ քրեական գործի ընթացքում պարզվեն էական հանգամանքներ:

- 23.06.2015 թ. Կազմակերպության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում, խաղաղ ցույց իրականացնող ցուցարարներին առևանգելու, վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելու և ապօրինի ազատությունից զրկելու, անձանց անօրինական կարգով հանրապետական նարկոլոգիական կլինիկա փորձաքննության ուղարկելու վերաբերյալ:

2015 թ. հուլիսի 2-ի պատասխան գրությամբ ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանի որոշումը այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումի և զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերն ուսումնասիրելուց հետո հարուցվել է քրեական գործ բռնություն գործադրելով զուգորդված՝ պաշտոնական լիազորություններն անցնելու, պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու, ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու դեպքերի առթիվ (ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մաս, 164-րդ հոդվածի 2-րդ մաս և 185-րդ հոդվածի 1-ին մաս):

- Կազմակերպության կողմից տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացվել ՀՀ ԱՆ նարկոլոգիական հանրապետական կենտրոն պարզելու թե 2015 թ. հունիսի 23-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում օրգանիզմում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հնարավոր առկայության վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու նպատակով ոստիկանության կողմից քանի անձ է ներկայացվել նարկոլոգիական հանրապետական կենտրոն:

[19] ցուցարարների նկատմամբ բռնություններ իրականացրած ոստիկանության այն աշխատակիցներն են, ում անունները հայտնի են

[20] ոստիկանաության այն աշխատակիցների, ովքեր բռնություններ են գործադրել ցուցարարների նկատմամբ, սակայն անուն ազգանունները պարզել հնարավոր չի եղել

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Հարցման վերաբերյալ ՀՀ նարկոլոգիական հանրապետակ կլինիկայից ստացվել է պատասխան, որով հայտնել են, որ 2015թ. հունիսի 23-25 ընկած ժամանակահատվածում օրգանիզմում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հնարավոր առկայության վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու նպատակով ոստիկանության կողմից Նարկոլոգիական հանրապետական կենտրոն է ներկայացվել 106 անձ:

- Տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն պարզելու թե 23.06.2015 թ. Երևան քաղաքում էլկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ բողոքի ակցիան ցրելիս ոստիկանների կողմից բռնության ենթարկվելու հետևանքով քանի անձ է դիմել Երևան քաղաքի բժշկական կենտրոններ: Մասնավորապես՝ նրանցից քանիսն են բժշկական հաստատություններ տեղափոխվել շտապօգնության ծառայության միջոցով, քանիսն են անձամբ դիմել բժշկական օգնություն ստանալու համար, ինչ վնասվածքներ են արձանագրվել նրանց մոտ բժշկական օգնության դիմելիս, նրանցից քանիսն են նույն օրը դուրս գրվել բժշկական հաստատությունից, քանիսը՝ ոչ:

2015 թ. հուլիսի 9-ին ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ ստացվել է շտապ բուժօգնության 31 կանչ, որից 25-ը ավարտվել է հոսպիտալացմամբ: Վնասվածքներ ստացած 13 քաղաքացի հոսպիտալացվել է «Սուրբ Գրիգոր Լուսավրիչ ԲԿ» ՓԲԸ, 5-ը «Էրեբունի ԲԿ» ՓԲԸ, 2-ը «Արմենիա ՀԲԿ» ՓԲԸ, 1-ը «Երևանի թիվ 2 բուժմիավորում», 4-ը «Երևան Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր: Տեղում բժշկական օգնություն է ստացել 6 քաղաքացի:

Հունիսի 24-ին ստացվել է 12 կանչ, որից մեկն ավարտվել է հոսպիտալացումով: Տեղում բժշկական օգնություն է ստացել 11 քաղաքացի, ծանր վնասվածքներ չեն արձանագրվել:

- 2015 թ. հունիսի 30-ին հարցում է ներկայացվել Երևան քաղաքի փոխոստիկանապետ Վ. Օսիպյանի հայտարարության վերաբերյալ: Մասնավորապես հայտարարությունում ասվել է, թե «Կան կազմակերպություններ, կան անհատ անձինք ովքեր ամեն օր գտնվում են այստեղ, ուշադիր ամեն ինչ հետևում են, այդ թվում ոստիկանության գործողություններին, այդ թվում աղբամանների վերևից, հեռախոսազանգեր են կատարում, այստեղից զեկույցներ են անում երկրից դուրս, երկրի ներսում և այլն և այլն: Իսկ թե ովքեր են՝ թույլ տվեք ոստիկանությունը զերծ մնա ասելով ովքեր են: (…)»:

Նշված հայտարարության հիման վրա կազմակերպության կողմից ՀՀ ոստիկանությանը ներկայացվել են հետևյալ հարցադրումները՝

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

- Երևանի փոխոստիկանապետի կողմից մեղադրական ոճով արված հայտարարության մեջ որ գործողություններն են (հեռախոսազանգերի կատարում, զեկույցների պատրաստում և տարածում) համարվում հակաօրինական,
- որ իրավական ակտի համաձայն են այդ գործողությունները համարվում հակաօրինական,
- որոնք են այն կազմակերպությունները, որոնք, ըստ Վ. Օսիպյանի «զեկույցներ են անում երկրից դուրս և երկրի ներսում»,
- ինչպես է Վ. Օսիպյանը իմացել իր հայտարության մեջ նշվող հեռախոսազանգերի մասին և արդյոք կատարվել են նման հեռախոսազանգեր:

ՀՀ ոստիկանության շտաբից ստացվել է պատասխան գրություն, որով հայտնել են, որ Վ. Օսիպյանին վերագրվող բառերն իրենց ամբողջության մեջ անձնական բնույթի դիտողություններ են, չեն հանդիսանում տեղեկատվություն, միևնույն ժամանակ հայտնել են, որ արտահայտությունները իրենց մեջ հակաօրինական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ չեն պարունակում:

- 2015թ. հուլիսի 1-ին տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացվել պարզելու, թե 2015 թ. հունիսի 24-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ Երևան և Վանաձոր քաղաքներում ցույց իրականացնող մասնակիցներից քանի անձ է բերման ենթարկվել ոստիկանության բաժիններ, նրանցից յուրաքանչյուրը ինչ հիմքով է բերման ենթարկվել, բերման ենթարկվածներից քանիսին է մեղադրանք առաջադրվել, քրեական օրենսգրքի որ հոդվածներով է մեղադրանք առաջադրվել, բերման ենթարկվածներից յուրաքանչյուրը քանի ժամ է պահվել ոստիկանությունում:

22.07.2015 թ. թվագրմամբ գրություն է ստացվել ՀՀ ոստիկանությունից, որով հայտնել են, որ նշված ժամանակահատվածում Վանաձոր քաղաքում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքի ակցիայի մասնակիցներից որևէ անձ բերման չի ենթարկվել: Երևանի Բաղրամյան պողոտայից նույն ժամանակահատվածում բերման է ենթարկվել 1 քաղաքացի, հանցագործություն կատարելու կասկածանքով, սակայն նրան մեղադրանք չի առաջադրվել և օրենքով սահմանված 3 ժամից ավել չի պահվել:

- Կազմակերպության կողմից 2015 թ. հուլիսի 6-ին 2 հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի Մալաթիայի և Նոր-

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Նորքի բաժինների ղեկավարների կողմից փասատաբանների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու և անձանց անօրինական անազատության մեջ պահելու վերաբերյալ:

27.07.2015թ. ՀՀ ՀՔԾ-ից գրությամբ հայտնել են, որ ներկայացված հանցագործության մասին հողորդումները կցվել են 02.07.2015թ. հարուցված քրեական գործին՝ դրա շրջանակներում քննություն կատարելու նպատակով:

- 2015թ. հուլիսի 7-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հարղորդում է ներկայացվել ՀՀ ՀՔԾ և գլխավոր դատախազություն, Ելենա Օվսյաննիկովայի իրավուքների պաշտպանության նպատակով:

Ներկայացված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որոշում չի ստացվել: Կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ ՀՔԾ հաղորդման հիման վրա որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Դեռևս պատասխան չի ստացվել:

- 2015 թ. հուլիսի 7-ին հիմք ընդունելով լրատվամիջոցներով տարածված նյութերը՝ թվով 5 հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՔԾ և ՀՀ Գլխավոր դատախազություն 2015 թ. հուլիսի 6-ին ցուցարարների՝ Դավիթ Սանասարյանի, Էդուլ Եդիգարյանի, Տիգրան Կիրիշչյանի, Նարեկ Այվազյանի և Սպարտակ Միրզոյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ:

2015 թ. հուլիսի 16-ի պատասխան գրությամբ ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանի որոշումը զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված հաղորդումների և նյութերի, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի և Միքայել Կիրակոսյանի հաղորդումների հիման վրա բռնություն գործադրելով զուգորդված՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ստանձնել է 2015 թ. հունիսի 23-ին և հուլիսի 6-ին ՀՀ Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ ցույցի մասնակից թվով 5 անձանց՝ Տիգրան Հակոբյանի, Ելենա Օվսյաննիկովայի, Դավիթ

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Սելիմյանի, Շողակաթ Վարդանյանի, Միքայել Կիրակոսյանի, իրավունքների պաշտպանությունը: Այս անձանցից Տիգրան Հակոբյանը և Միքայել Կիրակոսյանը քրեական գործով ճանաչվել են որպես տուժող, դիմումներ են ներկայացվել մյուսներին քերական գործով տուժող ճանաչելու վերաբերյալ:

Հունիսի 23-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացրել մի շարք հասարակական կազմակերպություններ, լրագրողներ և ցույցի մասնակիցներ[21]:

Հարկ է նշել, որ «Իլուր»-ի կայքի թղթակից Հակոբ Կարապետյանը, ով հունիսի 26-ին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Ոստիկանության Կենտրոնի բաժին, հուլիսի 7-ին հրավիրվել է ոստիկանության ներքին անվտանգության վարչություն՝ հունիսի 23-ի դեպքերի հետ կապված իր ներկայացրած հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ բացատրություն տալու, սակայն ոստիկանությունում լրագրողին գործարք են առաջարկել: Լրագրողի խոսքով ոստիկանությունում իրեն ասել են, թե պատրաստ են փոխհատուցել վնասը, բայց պայմանով, եթե վերջինս հրաժարվի բողոքից[22]:

[21] ՀՀ Հատուկ Քննչական Ծառայություն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել «Քաղաքացիների Միավորում» և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունները, Lragir.am-ի լրագրող Թեհմինե Ենոքյանը, «Իլուր»-ի կայքի թղթակից Հակոբ Կարապետյանը և այլք:

[22] Լրագրողների նկատմամբ բռնության գործով կասկածյալներ ցայսօր չկան.
http://www.azatutyun.am/content/article/27116857.html

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Ոստիկանության գործողությունների իրավական գնահատականը.

2015 թ. հունիսի 23-ին և հուլիսի 6-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ խաղաղ ցույցը ցրելու գործողությունները ուղեկցվել են մարդու իրավունքների և ազատությունների մի շարք խախտումներով:

2015 թ. հունիսի 23-ին հավաքը դադարեցնելու, մասնակիցներին բերման ենթարկելու և դրան հաջորդող գործընթացներն ուղեկցվել են հետևյալ խախտումներով.

1. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են գործադրել՝ ջրանետեր և զրահամեքենաներ: Արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի) (…), ինչպես նաև խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ:

<u>Սույն պարագայում հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները չեն եղել պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Ոստիկանության կողմից ջրցան մեքենաների, որպես հատուկ միջոցի կիրառումը եղել է անհամաչափ: Ջրցան մեքենաները կիրառվել են 300-400 խաղաղ ցուցարարի նկատմամբ, բազմաթիվ ցուցարարներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:</u>

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ, բացառիկ դեպքերում, հատուկ անհրաժեշտության կապակցությամբ ՀՀ օրենսդրական ակտերով կարող են սահմանվել վարչական ձերբակալման այլ ժամկետներ:

Ցուցարարների ազատությունը սահմանափակվել է նախատեսված 3 ժամից ավելին՝ առանց դատավարական կարգավիճակ սահմանելու և առանց հիմնավորման:

3. Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը իրավունք ունի՝ առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:

Ոստիկանության բաժիններ բերման ենթարկված անձանց մեծ մասը չի կարողացել օգտվել փաստաբանի ծառայություններից ոստիկանության կողմից ստեղծված խոչընդոտների պատճառով իսկ ոստիկանություն այցելած փաստաբանների զգալի մասը չեն կարողացել անմիջապես մուտք գործել ոստիկանություն:

5. Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ոստիկանությունը պարտավոր է ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ մարդկանց փրկելու և առաջին բժշկական օգնություն ցույց տալու:

Ոստիկանությունը առաջին բժշկական օգնություն ցույց չի տվել բերման ենթարկված քաղաքացիներին, որոնք վնասվածքները ստացել էին ոստիկանության բռնությունների հետևանքով:

6. ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման 22-րդ կետի համաձայն՝ծառայողները ծառայությունը կատարում են սահմանված ձևի համազգեստով:

Տվյալ պարագայում մի քանի տասնյակ ոստիկան ծառայությունը կատարել է առանց համազգեստի, ուստի իրավունք չեն ունեցել բերման ենթարկել ցուցարարներին: Ավելին, քաղաքացիական հագուստով ոստիկանները գտնվել են ցուցարարների շարքերում և ցույցը ցրելու գործողությունից ընդամենը րոպեներ առաջ են հագել «Police» գրառմամբ թևկապերը, որը նպատակ է ունեցել նպատակային բռնություններ կիրառելու և բռնությունից խուսափելու:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

6. Համաձայն՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը»:

Ավելին՝ ՀՀ Կառավարության 14 հունիսի 2007 թվականի N 818-Ն որոշմամբ Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին որոշման N 1 հավելվածի 1-ին մասի 1 կետի համաձայն՝ մարդն իրավունք ունի սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը: Համաձայն՝ նույն որոշման N 2 հավելվածի 2-րդ մասի մարդու իրավունքը սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը:

Սույն պարագայում ՀՀ ոստիկանության աշխատակիցներից մի մասը բացի այն որ չեն եղել ոստիկանական համազգեստով նաև չեն ներկայացել և չեն ներկայացրել բերման ենթարկելու պատճառները և հիմքերը:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի *քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին*, (...) հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, (...):

Սույն պարագայում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից 237 անձ բերման է ենթարկվել վկայի կարգավիճակով, ովքեր առ հասարակ չեն ծանուցվել ներկայանալ ոստիկանություն:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

8. ՀՀ զանգվածային լրատվության մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը: ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսում է քրեական պատասխանատվություն:

Ոստիկանության կարգապահական կանոնագրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ոստիկանության ծառայողը պարտավոր է իմանալ և հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ:

<u>Ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված անհամաչափ ուժից և անօրինական գործողություններից տուժել են նաև լրագրողները, ովքեր ցույցի ընթացքը լուսաբանելու նպատակով գտնվել են Բաղրամյան պողոտայում. Ոստիկանությունը խոչընդոտել է ԶԼՄ ներկայացուցիչների աշխատանքը և ուժ է կիրառել հավաքը լուսաբանող լրագրողների նկատմամբ, ոչնչացվել, փչացվել են նրանց մասնագիտական գործունեության իրականացման գործիքները: Լրագրողների նկատմամբ որոշ բռնություններ իրականացվել են բարձրաստիճան ոստիկանների ուղղակի հրահանգով:</u>

<u>Ոստիկանության որոշ ներկայացուցիչներ դրսևորել են ոչ վայելուչ և ոչ հարգալից վերաբերմունք ցույցի մասնակիցների և լրագրողների նկատմամբ՝ վերջիններիս հասցեին հնչեցնելով սեռական բնույթի հայհոյանքներ:</u>

9. ՀՀ սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

<u>Ոստիկանության որոշ ներկայացուցիչներ դրսևորել են ոչ վայելուչ և ոչ հարգալից վերաբերմունք ցույցի մասնակիցների և լրագրողների նկատմամբ՝ վերջիններիս հասցեին հնչեցնելով սեռական բնույթի հայհոյանքներ:</u>

<u>Հանրահավաքի մասնակիցներին բերման ենթարկելու անբողջ գործընթացը ի թիվս վկայակոչված խախտումների նաև հետապնդել է անձանց նվաստացնելու և հավաքին մասնակցելու համար «պատժելու» նպատակ:</u>

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

2015 թ. հուլիսի 6-ին հավաքը դադարեցնելու, մասնակիցներին բերման ենթարկելու և դրան հաջորդող գործընթացներն ուղեկցվել են հետևյալ խախտումներով.

1. Ոստիկանության կարգապահական կանոնագրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ոստիկանության ծառայողը պարտավոր է իմանալ և հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ:

Ոստիկանության աշխատակիցների գործողությունները չեն բխել վերը նշված իրավական նորմի տրամաբանությունից, վերջիններիս արարքում և արտահայտություններում՝ ցույցի մասնակիցների հետ շփման ժամանակ բացակայել են զսպվածության, քաղաքակրթության, հարգալից և վայելուչ վերաբերմունք դրսևորելու տարրերը:

2. Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Եթե հավաքն անցկացվում է սույն օրենքի 2-րդ գլխով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: **Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին»:**

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ իրականացվող բողոքի ակցիան՝ ի սկզբանե խաղաղ բնույթ է կրել, այն ուղղված չի եղել հասարակական կարգ խախտելուն, հավաքի նպատակը սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելը չի եղել, հետևաբար ոստիկանության աշխատակիցների գործողությունները պետք է ուղղված լինեին հավաքի մասնակիցներին աջակցելուն, այլ ոչ թե այն ցրելուն:

2015 թ. հուլիսի 6-ին ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել այն մասին, որ պատրաստվում է վերականգնե Բաղրամյան պողոտայի շուրջ երկու շաբաթ խաթարված երթևեկությունը, այդ թվում՝ դրան խոչընդոտող առարկաները պողոտայի երթևեկելի հատվածից հեռացնելու միջոցով: Ոստիկանությունը հերթական անգամ առանց որևէ հիմնավորման անօրինական է գնահատել հավաքը:

Ոստիկանության կողմից էլեկտրէներգիայի թանկացման դեմ իրականացվող ցույցը ցրելու գործընթացը իրականացվել է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

սահմանված հավաքը դադարեցնելու կարգի խախտմամբ, քանի որ վերջիններիս կողմից չեն պահպանվելը օրենքով ամրագրված դրույթների պահանջները:

Զեկույցը խմբագրվել է՝ 2015 թ. սեպտեմբերի 4-ին:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպությունն ունի ներկայացուցչություններ Սպիտակ և Երևան քաղաքներում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am